ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2019-2021թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-սեպտեմբեր)

Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ)՝ %







Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2021թ. հունվար-սեպտեմբերին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) կազմել է՝ 104.4%, 2020թ. հունվար-սեպտեմբերին 2019թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 93.2%, իսկ 2019թ. հունվար-սեպտեմբերին 2018 թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 106.9%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 1 տրլ 622 մլրդ 247 մլն դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 189 մլրդ 235.7 մլն. և 177 մլրդ.801.9 մլն դրամով:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 619 մլրդ 373.2 մլն դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 64 մլրդ 161.8 մլն. և 44 մլրդ.944.1 մլն դրամով:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 254 մլրդ 456.2 մլն դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 30 մլրդ 115.3 մլն. և 2 մլրդ.620.3 մլն դրամով:

Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 2 տրիլիոն 381 մլրդ 788.6 մլն դրամ, ինչը 2020 և 2019 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 339 մլրդ 178.7 մլն և 103 մլրդ 958.2 մլն դրամով. իսկ այլ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 1 տրլ 357 մլրդ 515.2 մլն դրամ, ինչը 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 91 մլրդ 281.9 մլն դրամով, իսկ 2019 թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 119 մլրդ 334.4 մլն դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-սեպտեմբերին 2020թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ կազմել է 100.7%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 101.0%-ի և 109.7%-ի պարագայում:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-սեպտեմբերին 2020թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ կազմել է 98.5%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 100.5%-ի և 95.2%-ի պարագայում:

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2021թ. հունվար-սեպտեմբերին 2020թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ կազմել է 106.4%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 84.3%-ի և 104.4%-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Առևտրի շրջանառության իրական աճը 2021թ. հունվար-սեպտեմբերին 2020թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ կազմել է 106.4%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 88.6%-ի և 108.8%-ի պարագայում. իսկ ծառայությունների ծավալի իրական աճը 2021թ. հունվար-սեպտեմբերին 2020թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ կազմել է 105.4%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 88.3%-ի և 115.5%-ի պարագայում:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 441 մլրդ 548.4 մլն դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 149 մլրդ 809.4 մլն. և 181 մլրդ 787 մլն դրամով:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 962 մլրդ 267.9 մլն դրամ, ինչը 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 25 մլրդ 907.7 մլն դրամով, իսկ 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 15 մլրդ 816.7 մլն դրամով:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 201 մլրդ 98.4 մլն դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 12 մլրդ 279.6 մլն և 13 մլրդ 733.6 մլն դրամով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 17 մլրդ 332.3 մլն դրամ, ինչը 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 1 մլրդ 239 մլն դրամով, իսկ 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 1 մլրդ 902 մլն դրամով:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-սեպտեմբերին 2020թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ կազմել է 100.1%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 116.7%-ի և 119.5%-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-սեպտեմբերին 2020թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ կազմել է 99.4%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 97.3%-ի և 109.3%-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-սեպտեմբերին 2020թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ կազմել է 107.3%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 100.4%-ի և 100.8%-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2021թ. հունվար-սեպտեմբերին 2020թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ կազմել է 107.5%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 83.8%-ի և 98.1%-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ





Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 173 մլրդ 429.3 մլն դրամ, ինչը 2020 և 2019 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 99 մլրդ 996.4 մլն և 174 մլրդ 630.5 մլն դրամով:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 233 մլրդ 725.9 մլն դրամ, ինչը 2020 և 2019 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 21 մլրդ 906 մլն և 37 մլրդ 870.9 մլն դրամով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2021թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 351 մլրդ 472.1 մլն դրամ, ինչը 2020 և 2019 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 7 մլրդ 324 մլն և 29 մլրդ 521 մլն դրամով:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2021թ. հունվար-օգոստոսին 2020թ. հունվար-օգոստոսի նկատմամբ կազմել է 63.1%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 91.0%-ի և 123.8%-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2021թ. հունվար-սեպտեմբերին 2020թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ կազմել է 111.1%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 107.6%-ի և 108.0%-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2021թ. հունվար-սեպտեմբերին 2020թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ կազմել է 102.8%, 2020 և 2019 թվականների, ինչպես նաև 2019 և 2018 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 107.4%-ի և 118.3%-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2021թ. հունվար-սեպտեմբերին 2020թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ կազմել է 106.7%, 2020թ. հունվար-սեպտեմբերին 2019թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 100.9%, 2019թ. հունվար-սեպտեմբերին 2018թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 101.6%: ՍԳԻ-ն 2021թ.սեպտեմբերին 2020թ.դեկտեմբերի նկատմամբ կազմել է 103.6%, 2020թ.սեպտեմբերին 2019թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 98.6%, 2019թ.սեպտեմբերին 2018թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 97.9%:

Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) 2021թ. սեպտեմբերի վերջի դրությամբ կազմել է 1 տրիլիոն 169 մլրդ 541 մլն դրամ, ինչը 272 մլրդ 939 մլն դրամով կամ 30.4%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 332 մլրդ 612 մլն դրամով կամ 39.7%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Աշխատանք փնտրողների թիվը 2021թ. սեպտեմբերի դրությամբ կազմել է 89080 մարդ, ինչը 533 մարդով կամ 0.6%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 5755 մարդով կամ 6.9%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2021թ. սեպտեմբերի դրությամբ կազմել է 60184 մարդ, ինչը 59 մարդով կամ 0.1%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 1767 մարդով կամ 2.9%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

ԱԺԲԳ

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)



ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)



Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ



Պետական բյուջեի պակասուրդը/հավելուրդը և դրա ֆինասավորման աղբյուրները, ընթացիք գներով, մլն դրամ



Արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը 2021թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 5 մլրդ 723.5 մլն դոլար, ինչը 621.3 մլն դոլարով կամ 12.2%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 80.5 մլն դոլարով կամ 1.4%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:
Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը 2021թ. հունվար-սեպտեմբերին կազմել է -1 մլրդ 438 մլն. դոլար, ինչը 7.4 մլն դոլարով կամ 0.5%-ով պակաս է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 380.2 մլն դոլարով կամ 20.9%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտահանման ծավալը (ՖՕԲ գներով) 2021թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 2 մլրդ 142.7 մլն դոլար, ինչը 314.3 մլն. դոլարով կամ 17.2%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 230.3 մլն դոլարով կամ 12.0%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Ներմուծման ծավալը (ՍԻՖ գներով) 2021թ. հունվար-սեպտեմբերին կազմել է 3 մլրդ 580.7 մլն դոլար, ինչը 306.9 մլն դոլարով կամ 9.4%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 149.9 մլն դոլարով կամ 4.0%-ով պակաս է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2021թ. հունվար-սեպտեմբերին նախնական գնահատմամբ կազմել է 198757 դրամ, ինչը 11795 դրամով կամ 6.3%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 20125 դրամով կամ 11.3%-ով ավել է 2019թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

2021թ. հունվար-սեպտեմբերին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է 147 մլրդ 522.7 մլն դրամ, ընդ որում, ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -92 մլրդ 323.3 մլն դրամ, արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ 239 մլրդ 846 մլն դրամ: 2020թ. հունվար-սեպտեմբերին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է 154 մլրդ 799.2 մլն. դրամ: Ընդ որում ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար 173 մլրդ 606.6 մլն դրամ և -18 մլրդ 807.4 մլն դրամ: 2019թ. հունվար-սեպտեմբերին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 95 մլրդ 98.8 մլն. դրամ, ընդ որում, ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -71 մլրդ 546.5 մլն դրամ և -23 մլրդ 552.3 մլն. դրամ:

Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ